

---

## ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿԱՊԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

### ՄԱՐԻԱՄ ՊՈՂՈՍՅԱՆ

Վերջին տարիներին համաշխարհային տնտեսության աճի արագ տեմպերը պայմանավորված են տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների բնագավառում կատարվող ինովացիաներով և արդյունաբերական տարբեր ճյուղերում դրանց առևտրայնացմամբ:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները (այսուհետ նաև՝ S2S) էլեկտրոնային, հեռահաղորդակցության, ծրագրային ապահովման, շարժական կապի, ցանցերի, ապակենտրոնացված համակարգչային աշխատանքի և տեղեկատվական մեդիայի ամբողջությունն են<sup>1</sup>:

Երկրների մրցունակությունը մեծապես կախված է նոր տեխնոլոգիաներն ընդունելու նրանց կարողությունից: S2S հիմնական տնտեսական առաքելություններից են.

1. Աշխատատեղերի ստեղծում: S2S ոլորտը եղել է և շարունակելու է մնալ ամենամեծ գործատուներից:

2. ՀՆԱ-ի աճ: Հետազոտողները պարզել են, որ S2S-ն դրական ազդեցություն ունի երկրի տնտեսական աճի վրա, որը հիմնականում պայմանավորված է էլեկտրոնային առևտրով. մարդիկ գնում և վաճառում են, գովազդում են իրենց արտադրանքը՝ օգտագործելով S2S հնարավորությունները:

3. Նոր ծառայությունների ստեղծում: Հանրային բազմաթիվ ծառայություններ հասանելի են առցանց և բջջային կապի միջոցով: Էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրումը յուրաքանչյուր երկրի արդիականացման առանցքային կետերից է:

4. Աշխատուժի վերափոխություն: Նոր աշխատանքային հարթակների ստեղծումը՝ ինչպիսին upwork-ն է, հնարավորություն է տալիս կատարելու աշխատանքի բաժանում, գտնելու ավելի բարձր որակավորված և էժան աշխատուժ՝ հիմնականում զարգացող երկրներից: S2S-ի կիրառումը նաև լայնորեն նպաստում է ձեռներեցների թվի աճին՝ սկսնակների համար ավելի հեշտացնելով գործընթացները, հասանելի դարձնելով հաջողակների փորձը, ստեղծելով ներդրումներ գտնելու հնարավորություններ:

5. Բիզնես ինովացիաներ: Տնտեսական համագործակցության և

---

<sup>1</sup> Տե՛ս <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC3495961/>

գարգացման կազմակերպության (OECD) երկրներում բիզնեսների ավելի քան 95 %-ը գտնվում է առցանց տիրույթում: Համացանցը նրանց շուկայում ավելի մեծ մասնաբաժին ունենալու, շատ հաճախորդներ ձեռք բերելու հնարավորություն է տալիս<sup>2</sup>:

Հաղորդակցության ժամանակակից մեթոդները հնարավորություն են ընձեռում շատ արագ կապ հաստատելու արտադրողների և վաճառողների միջև, լուծելու ամենաբարդ խնդիրները՝ անկախ հեռավորությունից: Կապի աշխատանքը նպաստում է ապրանքային և դրամական հոսքերի բաշխման օպերատիվությանը, ճշգրտությանը և արագությանը: Առանց հստակ աշխատող կապի ոլորտի՝ ձեռնարկություններն ու բանկերը չեն ունենա վստահելի տեղեկատվություն տվյալ պահին շուկայում գործող գների վերաբերյալ:

Վերջին տասնամյակներում կապը հետզհետե կատարելագործվում է: Այն ավելի հաճախ են կոչում հաղորդակցություն<sup>3</sup>: Կապը հանրային ծառայությունների մի ճյուղ է, որի գործառույթներից է հաճախորդներին ծառայություններ մատուցելը տարբեր տեսակի հաղորդագրությունների միջոցով: Կապի ոլորտն ունի նյութական արտադրությանը բնորոշ բոլոր գծերը. հասարակությանը տրամադրում է ծառայություններ տեղեկատվություն հավաքելու, մշակելու և փոխանցելու ուղղությամբ:

Որպես նյութական արտադրության ճյուղ՝ կապի ոլորտի տնտեսական ցուցիչ է այն, որ ծառայությունների ստեղծման գործընթացում ևս առկա են աշխատանքի միջոցը, առարկան և աշխատանքը:

Կապի ոլորտի ձեռնարկության աշխատանքի հիմնական միջոցներն են սարքավորումները, կայանները, շինությունները: Աշխատանքի առարկան են տեղեկատվությունը, հաղորդագրությունը, որոնք փոխանցման ընթացքում ենթարկվում են տարածական տեղափոխման: Աշխատանքի միջոցներով աշխատանքի առարկայի վրա ազդում են ոլորտում աշխատողները, որոնց գործունեությունն էլ վերջին հաշվով ստեղծում է սպառողական արժեք:

Կապի ոլորտի տնտեսական բնույթին բնորոշ են մի շարք առանձնահատկություններ:

1. Ստեղծվող արտադրանքի յուրահատկությունը, որը, ի տարբերություն արդյունաբերական արտադրանքի, նոր արտադրանք կամ ապրանք չէ, այլ ծառայություն է՝ տեղեկատվության փոխանցման գործընթացի վերջնական արդյունք: Այս ոլորտի արտադրանքի ինքնարժեքում նյութական ծախսերի բաժինը փոքր է, քանի որ չկան կամ քիչ են օգտագործվում հումք կամ այլ նյութեր: Հիմնական մաս է կազմում աշխատուժի վարձատրությունը:

2. Ծառայությունը արտադրվում և սպառվում է միաժամանակ: Հատկապես այդ փաստը ակնհայտ է բջջային կապում, որտեղ արտա-

<sup>2</sup> Տե՛ս <https://www.weforum.org/agenda/2013/04/five-ways-technology-can-help-the-economy/>

<sup>3</sup> Տե՛ս <https://www.empitry.com/301-rol-svyazi-v-infrastruktura-yekonomiki.html>

դրության գործընթացը՝ հեռախոսային հաղորդագրության ստեղծումը և փոխանցումը, առանց բաժանորդի հնարավոր չէ:

3. Այստեղ աշխատանքի առարկան՝ տեղեկատվությունը, որևէ ձևափոխության չի ենթարկվում, այլ միայն տեղափոխվում է տարածության մեջ: Ուղարկվող հաղորդագրությունը սկզբում կոդավորվում է, բայց տեղ է հասնում ասպակոդավորված: Մեծ նշանակություն ունեն տեղեկատվության փոխանցման հավաստիությունը, ձայնարձակման հստակությունը:

Կապի առանձնահատկությունները դիտարկելիս պետք է հաշվի առնենք նաև դրա ենթակառուցվածքային բնույթը: Դրա տակ հասկանում ենք հանրային արտադրության կազմակերպչական միավորների ամբողջությունը, որոնց գործունեության հիմնական արդյունքը ոչ թե վերջնական առարկայական արտադրանքի ստեղծումն է, այլ ծառայությունների մատուցումը արտադրական և ոչ արտադրական հատվածին:

Ենթակառուցվածքում ներառվում են այն բոլոր ճյուղերը, առանց որոնց արտադրության գործընթացը անհնար է (տրանսպորտ, կապ, էներգետիկա և այլն):

Յուրաքանչյուր երկրի համար ռազմավարական ճյուղերից է հեռահաղորդակցությունը, որը մեծ դեր է կատարում գլոբալ և ազգային տնտեսության հավասարակշռված զարգացման գործում: Այն կապող օղակ է ինչպես արդյունաբերական ու ծառայությունների ոլորտների և սպառողների, այնպես էլ աշխարհագրորեն հեռու տարածքների և տնտեսական կենտրոնների միջև: Հեռահաղորդակցության ժամանակակից մեթոդները տարեցտարի դառնում են սոցիալական ներառման և մշակութային զարգացման անհրաժեշտ պայման:

Հեռահաղորդակցությունը կարևոր դեր ունի նաև արտադրության ոլորտում՝ ոչ միայն սպասարկելով այն, այլև անուղղակիորեն ներառվելով արտադրությունում բիզնես գործընթացների ավտոմատացման միջոցով: Ուստի կապի ոլորտում որևէ խաթարում կհանգեցնի արտադրական գործունեության խափանման, որն էլ իր հերթին կնվազեցնի տնտեսական զարգացման տեմպերը<sup>4</sup>:

Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտում գործում է 33 ընկերություն, որոնք, ըստ NACE rev2-ի (Եվրոպական միության տնտեսական գործունեության տեսակների վիճակագրական դասակարգիչ), դասվում են լարային հեռահաղորդակցության համակարգերի ծառայությունների, անլար հեռահաղորդակցության համակարգերի ծառայությունների, հեռահաղորդակցության կապի այլ ծառայություններ տրամադրող ընկերությունների և վեբ պորտալների հետ կապված գործունեություն իրականացնող ընկերությունների շարքին: Այս ընկերությունների տրամադրած հիմնական ծառայությունները ներառում են շարժական և ֆիքսված կապը, մալուխային և անլար ինտերնետը, SS են-

<sup>4</sup> Sté u Горелик М. А., Голубицкая Е. А., Кузовкова Т. А., Липатов А. Ю., Иванова Б. С., Попова О. В. Основы экономики телекоммуникаций (связи), М.: «Радио и связь», 1997, էջ 6-9:

թակառուցվածքի տրամադրման (օրինակ՝ վեբ հոսթինգ) և VoIP ծառայությունները: Հեռահաղորդակցության ոլորտի ընկերությունները ծառայություններ են մատուցում հիմնականում ներքին շուկայում: Ներկայումս Հայաստանում գործում են բջջային կապի երեք օպերատորներ («ՎեՈՆ Արմենիա» ապրանքանիշը՝ «Beeline», «ՎեՈՆ» ընկերությունների խմբի անդամ, «ՎիվաՍել-ՄՏՍ» ռուսական «MTS» ընկերության դուստր ձեռնարկությունը և «Յուբոմ» ընկերությունները): 2017 թվականի դեկտեմբեր ամսվա տվյալներով՝ Հայաստանում կան շարժական կապի ավելի քան 4.1 միլիոն օգտագործողներ/բաժանորդներ: Իսկ ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների ոլորտում աճի բացասական միտումներ են արձանագրվել դեռևս 2009 թվականից սկսած. 2017 թվականի դրությամբ այդ ծառայություններից օգտվողների թիվը կազմել է ավելի քան 556,000<sup>5</sup>: Համաձայն Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ կապի ոլորտից ստացվող հասույթը (տե՛ս աղյուսակ 1)<sup>6</sup>, սկսած 2014 թ.-ից, ունի անկման դինամիկա (տե՛ս գծապատկեր 1):


**Աղյուսակ 1**

**Կապի ծառայություններից հասույթը առանց ԱԱՀ (մլն ՀՀ դրամ)**

Թվական	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Բացարձակ արժեք	172337.2	171785.6	176170.7	183914.1	180730.5	169386.7	151844.7	145588.3
Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ (%)	104.1	100.3	102.6	108.9	98.3	93.7	90.5	95.9

**Գծապատկեր 1**

**Կապի ծառայություններից ստացված հասույթի դինամիկան 2010-2017 թթ.**



<sup>5</sup> Տե՛ս «Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն», Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, 2017, էջ 19-21:

<sup>6</sup> Տե՛ս [www.armstat.am](http://www.armstat.am) կայքէջը

Պատահական չէ, որ Համաշխարհային մրցունակության 2017 թ. հաշվետվության մեջ մրցունակության ինդեքսի հաշվարկման ժամանակ 9-րդ հիմնաքարը համարվում է երկրի տեխնոլոգիական պատրաստվածությունը, որը ներառում է հեռահաղորդակցության ոլորտում կատարվող ներդրումները, 1000 բնակչի հաշվով հեռախոսակապի խտությունը, ինտերնետ օգտագործողների քանակը, շարժական կապից օգտվողների թիվը և այլն:

Համաձայն Համաշխարհային տնտեսական համաժողովի (WEF) հրապարակած Համաշխարհային մրցունակության (Global Competitiveness Index, GCI) 2017-2018 թթ. զեկույցի վարկանիշային աղյուսակում Հայաստանն աշխարհի 137 երկրների շարքում 77-րդն է ըստ տեխնոլոգիական պատրաստվածության. նախորդ տարվա համեմատ 6 կետով զիջելով դիրքերը (տե՛ս աղյուսակ 2): Հարևան երկրների ցուցանիշներն են՝ Ադրբեջան՝ 56, Թուրքիա՝ 62, Վրաստան՝ 70:

**Աղյուսակ 2**

**Մրցունակության հիմնաքարերը.  
9-րդ հիմնաքար տեխնոլոգիական պատրաստվածություն**

Մրցունակության 9-րդ հիմնաքար տեխնոլոգիական պատրաստվածության ենթակետեր	Հայաստանի տեղը 137 երկրների ցանկում	Ինդեքսը (1-7, 7-ը լավագույն)
Տեխնոլոգիական ընկալումը (1-7)	80	4.3
Նորագույն տեխնոլոգիաների առկայությունը (1-7)	77	4.5
Տեխնոլոգիայի կլանումը ձեռնարկության մակարդակով (1-7)	77	4.3
ՕՈՆ և տեխնոլոգիայի փոխանցում (1-7)	90	4.1
S2S օգտագործում (1-7)	72	3.9
Ինտերնետ օգտագործողներ, բնակչության %	62	62.0
Ֆիքսված լայնաշերտ ինտերնետի բաժանորդագրությունները (100 բնակչի հաշվով)	70	10.1
Ինտերնետ թողունակություն (կբ/վրկ/ օգտ)	67	59.9
Շարժական լայնաշերտ բաժանորդագրությունները (100 բնակչի հաշվով)	76	53.9

Տեխնոլոգիաների անընդհատ զարգացումը ծառայությունների և արտադրության ոլորտում հանգեցնում է աշխատատեղերի կրճատման, սակայն միաժամանակ սպառողների համար մեծ արժեք է ստեղծում: Բջջային հեռախոսների, սենսորային համակարգերի օգտագործումը զոյացնում է տվյալների մեծ բազա, որ ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով հասանելի է աշխարհի ցանկացած կետում գտնվող անհատի և կազմակերպության:

Տեխնոլոգիական պատրաստվածության ինդեքսը բնութագրում է երկրների ճկունությունը նոր տեխնոլոգիաների ներդրման և կիրառման հարցում: Այս ինդեքսի ցուցիչների աճի շնորհիվ է, որ երկրները Համաշխարհային մրցունակության զեկույցի դասակարգման 2-րդ մակարդակում են հայտնվում, որից հետո տեխնոլոգիաների հետ ինովացիաների կիրառումը բարձրացնում է երկրի զարգացման ցուցանիշը:

Այս ինդեքսի ցուցիչներում ներկայացված է նորագույն տեխնոլոգիաների առկայությունը, որի 4.5 ցուցանիշը ցույց է տալիս, որ Հայաստանում բավականին արագ են ներդրվում նոր տեխնոլոգիաներ: Այս ինդեքսով Հայաստանի դիրքերի բարելավման հարցում մեծ նշանակություն ունեն կապի և հաղորդակցության ոլորտի զարգացումը և այդ կազմակերպությունների կողմից նոր տեխնոլոգիաների կիրառումը: Ինտերնետ և բջջային կապ օգտագործում է բնակչության 53-62 %-ը<sup>7</sup>: Բացի այդ՝ հայաստանյան կապի և հեռահաղորդակցության օպերատորները պարբերաբար ներդնում են նոր տեխնոլոգիաներ՝ կապի և ինտերնետի որակը բարելավելու նպատակով:

Հեռահաղորդակցության ոլորտում ամենամեծ կշիռը եկամտաբերության առումով ունի շարժական կապը: Շուկայի գերհագեցման ժամանակակից պայմաններում և ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցության պատճառով օպերատորների եկամուտները նվազում են. ի հաշիվ բաժանորդների թվի ավելացման զարգացումն այլևս անհնար է, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է փնտրել արդյունավետ զարգացման այլ ուղիներ: Շարժական կապը նպաստում է երկրների տնտեսական և սոցիալական զարգացմանը:

Շարժական կապի բաժանորդների թիվը հասնում է 6,8 մլրդ-ի, և աշխարհի բնակչության 40 %-ից ավելին արդեն իսկ օնլայն տիրույթում է:

Շարժական կապը հաղորդակցման հնարավորություն է տալիս հասարակության այն սեկտորին, որը, որպես կանոն, ֆիքսված հեռախոսային ցանցին լավ միացած չէ: Մա նկատելի է այն զարգացող երկրներում, որտեղ ֆիքսված կապը միայն մեծ քաղաքներում է, իսկ գյուղական համայնքների բնակիչների համար դրա ներդրումը մեծ ծախսեր է պահանջում: Ուստի նման դեպքերում շարժական կապի օպերատորները շատ հաճախ դառնում են այդ հատվածի կապի հիմնական ծառայություն մատուցողներ: Շարժական կապի կարևորագույն բաղկացուցիչներից են բջջային կապը և շարժական ինտերնետը:

Տնտեսական միգրացիան՝ տեղափոխումը գյուղական համայնքներից քաղաքային բնակավայրեր և երկրից երկիր, հանգեցրել է նրան, որ նույն ընտանիքի անդամներն ապրում են տարբեր երկրներում և հարազատների հետ մշտական կապի մեջ են լինում շնորհիվ հաղորդակցման ժամանակակից տեխնոլոգիաների: ՏՀՏ-ների ներդրման միջոցով ավելի է հեշտացել դրամական փոխանցումների իրականացու-

<sup>7</sup> Տե՛ս «Global Competitiveness Report» 2017-2018

մը՝ բջջային դրամապանակների միջոցով<sup>8</sup>:

21-րդ դարը տեխնոլոգիական զարգացման փուլ է. ստեղծվում են նոր և հետաքրքիր արտադրատեսակներ, ծառայություններ. շուկան ընդլայնվում է, տեղեկատվությունը ավելի արագ է տարածվում: Համաշխարհային շուկայում մրցունակ մնալու համար կազմակերպությունները և երկրները պետք է ճկունություն դրսևորեն, ձգտեն քայլել ժամանակի պահանջներին համահունչ և զարգանալ:

Խոսելով անընդհատ կատարելագործման և զարգացման մասին՝ մենք նկատի ունենք նաև ինովացիաները: «Ինովացիա» հասկացությունը տարբեր ժամանակներում ընկալվել է տարբեր կերպ. 19-րդ դարում ինովացիա ասելով հասկանում էին մի մշակույթի տարրերի փոխանցումն ու ներդրումը մեկ այլ մշակույթի մեջ: 20-րդ դարում ինովացիա էին համարում տեխնիկական կատարելագործումները:

Տարբեր հեղինակներ ինովացիայի տարբեր սահմանումներ են տալիս: Օրինակ՝ ըստ Պ. Դրուկերի ինովացիան գործընթաց է, որը ռեսուրսներին ընձեռում է նյութական արժեքներ ստեղծելու նոր հնարավորություններ: Նա նշում է, որ ինովացիան ոչ թե փոփոխությունների կառավարումն է, այլ դրանց նպատակաուղղված փնտրտուքը, որը կարող է օգտագործել ձեռներեցր: Նա սերտորեն կապում է նորարարությունը և ձեռներեցությունը՝ նշելով՝ «...ինովացիան ձեռներեցության անանձնահատուկ գործիք է»<sup>9</sup>:

Ըստ ՏՀԶԿ Օսլոյի ուղեցույցի՝ ինովացիան ինչ-որ նոր կամ զգալիորեն բարելավված ապրանքի, ծառայության կամ գործընթացի, մարքեթինգի նոր մեթոդի կամ աշխատուժի բաշխման սպառման նոր եղանակների ներդրումն է:

Ինովացիայի նվազագույն պահանջն այն է, որ ապրանքը, գործընթացը, մարքեթինգի մեթոդը կամ կազմակերպությունը նոր լինեն կամ զգալիորեն բարելավված<sup>10</sup>:

Դիտարկելով ինովացիայի տարբեր սահմանումները՝ հանգում ենք եզրակացության, որ ինովացիայի առանցքային կետը գաղափարի իրականացումն է, որը կնպաստի փոփոխություններին կազմակերպության և՛ ներքին, և՛ արտաքին միջավայրում՝ նոր արժեք ստեղծելով թե՛ կազմակերպության և թե՛ հաճախորդների համար:

Ինովացիաների ներդրումը նպաստում է շահույթի ավելացման, որը ապահովում է կազմակերպության մրցունակ գործունեությունը շուկայում, շատ ինովացիոն նախագծեր նաև գիտական արդյունք են ստեղծում<sup>11</sup>:

Տնտեսապես զարգացած երկրները ներկայումս իրենց ՀՆԱ աճի

<sup>8</sup> Տե՛ս <http://www.incore.me/svyaz/rol-mobilnoj-svyazi-v-razvitii-ekonomiki/>

<sup>9</sup> Алан Баркер. Алхимия инноваций. М.: "Вершина", 2003, с. 13-15.

<sup>10</sup> Տե՛ս «Руководство Осло». М.: ЦИСН 2006, էջ 33-45:

<sup>11</sup> Տե՛ս «Экономика, управление, финансы: материалы междунар. заоч. науч. конф.» (Пермь, июнь 2011 г.). Пермь: "Меркурий", 2011:

մեծ մասը ապահովում են ինովացիաների և տեխնոլոգիական առաջընթացի մեջ ներդրումներ կատարելու միջոցով: Սկսած անցյալ դարի 70-ական թթ.-ից ձևավորվել է զարգացած երկրների հիմնական շրջանակը, որոնք առանձանում են մրցունակության, մարդկային և գիտական ներուժի զուբալ ինդեքսի աճով:

Համաշխարհային տնտեսական ֆորումի արդյունքներով՝ զարգացած երկրների ինովացիոն ինտեգրման ինդեքսը 82 % - 55 %-ի սահմաններում է: Այս ինդեքսը Համաշխարհային բանկի սահմանած մրցունակության գնահատման 12 կարևոր հիմնաքարերից մեկն է: Ինովացիոն ինդեքսում մեծ դեր ունի նաև S2S կիրառումը: Այն սերտորեն կապված է նաև երկրի տեխնոլոգիական պատրաստվածության ինդեքսի հետ, ուստի դրա ենթակետերի ցուցանիշների բարելավումը կնպաստի նոր տեխնոլոգիաներ ստեղծելու, ներդնելու գործին (տե ս ադյուսակ 3)<sup>12</sup>:

Հայաստանյան կապի օպերատորները վերջին մի քանի տարիներին սկսել են մեծ ուշադրություն դարձնել ոլորտի մասնագետների պատրաստմանը և համագործակցում են բուհերի, ուսումնական հաստատությունների հետ:

ՀՀ-ի զարգացման մեջ կարևորագույն ուղղություն է գիտելիքահենք տնտեսության ստեղծումը, որն էլ նպաստում է երկրում ինովացիաների և նոր տեխնոլոգիաների ներդրմանը:

**Աղյուսակ 3**

**Մրցունակության հիմնաքարերը. 12-րդ հիմնաքար՝ ինովացիա**

Մրցունակության 12-րդ հիմնաքար՝ ինովացիա. ենթակետեր	Տեղը 137 երկրների ցանկում	Ինդեքսը (1-7, 7-ը լավագույն)
Նորարարության կարողություն (1-7)	59	4.2
Գիտահետազոտական կազմակերպությունների որակը (1-7)	88	3.5
Ընկերության ծախսերը հետազոտությունների և զարգացման վրա (1-7)	71	3.2
Հետազոտությունների և զարգացման ուղղվածությամբ համալսարան-կազմակերպություն համագործակցություն(1-7)	88	3.2
Առաջատար տեխնոլոգիական արտադրանքի գծով պետական գնումները (1-7)	80	3.2
Գիտնականների և ինժեներների առկայությունը (1-7)	48	4.3
Արտոնագրային համագործակցության պայմանագրեր, դիմումներ/մլն բնակչի հաշվով	57	2.6

Աղյուսակի տվյալները՝ Համաշխարհային մրցունակության 2017-2018թթ. զեկույցից:

<sup>12</sup> Տե՛ս «Global competitiveness report» 2017-2018:



Համաձայն համաշխարհային մրցունակության 2017-2018 թթ. զեկույցի՝ Հայաստանը զարգացման 2-րդ մակարդակում է, այսինքն՝ արդյունավետության բարձրացմանը միտված տնտեսությամբ երկիր է, մրցունակ է, ունի արտադրական արդյունավետ գործընթացներ և ապրանքների աճող որակ: Համաձայն զեկույցի՝ նույն մակարդակում են նաև Ռուսաստանի Դաշնությունը և Վրաստանը: Հարևան երկրներից միայն Թուրքիան այս մակարդակից անցում է կատարում դեպի 3-րդ մակարդակ՝ դեպի ինովացիոն զարգացմանն ուղղված երկրների ցանկ:

Ուսումնասիրելով ցուցանիշները՝ հանգում ենք այն եզրակացության, որ երկրի մրցունակությունը մեծապես կախված է բոլոր գործոնների զուգահեռ զարգացումից: Վերևում դիտարկված ինդեքսներն էլ իրարից անկախ չեն, մի ինդեքսի բարելավումը նպաստում է մյուսի առաջխաղացմանը: Օրինակ՝ բուհ-հեռահաղորդակցության կազմակերպություններ համագործակցությունը ՀՀ-ում նպաստում է ոլորտում ավելի բանիմաց աշխատակիցներ ունենալուն և նոր տեխնոլոգիաներ մշակելուն:

Այսպիսով՝ դժվար է պատկերացնել ժամանակակից գործընթացները առանց տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների: Տեխնոլոգիական առաջընթացի մեջ կարևոր դեր ունեն երկրում և տարածաշրջանում գործող շարժական կապի օպերատորների կատարած տեխնոլոգիական բարեփոխումները:

Ցանկացած երկրի զարգացման և մրցունակության մակարդակը գնահատվում է ոչ միայն նյութական արտադրության ծավալով, այլև տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման աստիճանով, երկրում նորարարությունների կիրառման արդյունավետությամբ, ՏՀՏ կիրառմամբ: Իսկ կապի և հեռահաղորդակցության ոլորտը աշխարհում ամենադինամիկ զարգացողներից է: Այստեղ հեշտությամբ ներդրվում են ինովացիաները:

**Բանալի բառեր** – *ինովացիաների ներդրում, կապի ոլորտ, մրցունակության գնահատում, զարգացում, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ*

**МАРИАМ ПОГОСЯН – Инновационная деятельность как основное направление развития сектора связи.** – Уровень развития и конкурентоспособности любой страны оценивается не только объемом материального производства, но и уровнем развития информационных технологий, эффективностью внедрения и использования инноваций в области коммуникаций. Связь и телекоммуникация – один из наиболее динамично развивающихся секторов, именно в него охотно инвестируются инновации. Развитие телекоммуникаций в значительной степени способствует повышению уровня жизни населения, созданию новых рабочих мест и расширению возможностей.

**Ключевые слова:** *внедрение инноваций, связь, оценка конкурентоспособности, развитие, информационно-коммуникационные технологии*

**MARIAM POGHOSYAN – *Innovation Activity as the Main Direction of Development of Communication Sphere.*** – The level of development and competitiveness of any country is assessed not only by the volume of material production, but also by the level of information technology development, the efficiency of innovation introduction in the country, and the use of information and communication technologies. Communication and telecommunication is one of the most dynamically developing spheres in the countries, where innovations are easily invested. The development of this sector greatly contributes to the improvement of the living standards of the population, the creation of new jobs and the expansion of opportunities.

**Key words:** *innovation introduction, communication, competitiveness assessment, development, information and communications technology*

Ներկայացվել է՝ 19.06.2019

Գրախոսվել է՝ 27.06.2019

Ընդունվել է տպագրության՝ 22.07.2019